ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ
Խորհրդի 2026 թվականի ապրիլի 21-ի թիվ 3(26) որոշմամբ

Խորհրդի նախագահ՝ Նարեկ Հովակիմյան

ստորագրություն

ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 5

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 5

ԳԼՈՒԽ 4. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ 6

ԳԼՈՒԽ 5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 7

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ 7

ԳԼՈՒԽ 7. ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 7

ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ 7

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԿԱՄ ԴՐԱ ՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ 10

ԳԼՈՒԽ 10. ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԶԻՋՄԱՆ (ՑԵՍԻԱ) ԻՐԱՎՈՒՆՔ 12

ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 13

ԳԼՈՒԽ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14

ԳԼՈՒԽ 13. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՐՈՒՅԹՆԵՐ 15

ԳԼՈՒԽ 14. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 17

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են Ապահովադրի կողմից Վարկառուին տրամադրված Նախաարտահանման ֆինանսավորման (այսուհետ՝ Նախաարտահանման վարկ) գծով մարման ենթակա գումարների չվճարման ռիսկերից ապահովագրության (այսուհետ՝ Ապահովագրություն) կանոնները և սահմանում են Ապահովագրության սկզբունքները:
2. Պայմաններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) ***Ապահովագրող*** *- «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ:*
   2) ***Ապահովադիր*** *- Ապահովագրողի հետ Վկայագիր կնքած բանկ կամ այլ ֆինանսական կազմակերպություն, որն Ապահովագրողի կողմից տրամադրվող Ապահովագրության ապահովվածությամբ Վարկառուին տրամադրում է Նախաարտահանման վարկ:*
   3) ***Շահառու*** *- ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Վկայագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:*
   4) ***Վարկառու*** *- Արտահանող, որի հետ Ապահովադիրը կնքել է /կարող է կնքել/ Վարկային պայմանագիր:*
   5) ***Վարկային պայմանագիր*** *- Ապահովադրի և Վարկառուի միջև կնքված Նախաարտահանման վարկի պայմանագիր:*
   6) ***Նախաարտահանման վարկ*** *- Ապահովադրի կողմից Վարկառուին մինչև 730 օր ժամկետով տրամադրված ֆինանսական միջոցներ, որոնք պետք է ուղղվեն Արտահանման պայմանագրով նախատեսված արտահանման ենթակա ապրանք ստանալու (արտադրելու) կամ ծառայություններ մատուցելու համար շրջանառու միջոցների ձեռքբերման ծախսերի (այդ թվում՝ հումքի, նյութերի ձեռքբերում) և/կամ որոշակի այլ ծախսերի կատարմանը (փաթեթավորման, արտադրանքը շուկայական տեսքի բերելու, տրանսպորտային, մաքսային և այլ ծախսերի կատարում) և որոնք մարվում են Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետին: Նախաարտահանման վարկը կարող է տրմամադրվել նաև վերականգնվող վարկային գծի տեսքով:*
   Նախաարտահանման վարկ է համարվում նաև սույն ենթակետով նախատեսված ծախսերի կատարման ապահովման համար՝
   ա) Ապահովադրի կողմից Արտահանողին տրամադրված բանկային երաշխիքի կատարման արդյունքում Արտահանողի նկատմամբ ձևավորված (ձևավորվելիք) վարկը,
   բ) Ապահովադրի հետ համաձայնեցված մատակարարների ցանկում նշված մատակարարների օգտին Վարկառուի հանձնարարությամբ Ապահովադրի կողմից թողարկված փաստաթղթային ակրեդիտիվով կատարված ակրեդիտիվի հիմնական գումարի վճարում, բացառությամբ ակրեդիտիվի նկատմամբ հաշվարկված տոկոսների, սպասարկման վճարների, ակրեդիտիվի թողարկման համար նախատեսված միջնորդավճարների, ինչպես նաև տույժերի, տուգանքների և պատժիչ բնույթ ունեցող այլ գանձումների չվճարման հետևանքով Ապահովադրի կողմից կրած վնասների: Ընդ որում, Նախաարտահանման վարկի գումարը չի կարող լինել ավել, քան տվյալ ակրեդիտիվով վճարման ենթակա հիմնական գումարը:
   7) ***Արտահանման պայմանագիր*** *- Վարկառուի ու Ներմուծողի միջև կնքված ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագիր:*
   8) ***Արտահանող*** *- ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի ՀՀ տարածքում գրանցված առանձնացված տարածքային ստորաբաժանում, որը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, զբաղվում է*

ձեռնարկատիրական գործունեությամբ և զբաղված է արտահանման ենթակա ապրանքների արտադրությամբ կամ ծառայությունների մատուցմամբ:

9) ***Ներմուծող*** *- ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ, որը, Արտահանման պայմանագրին համապատասխան, ներմուծում է իրականացնում ՀՀ-ից:*

10) ***Արտահանում*** *- Արտահանման պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարում կամ ծառայությունների մատուցում Ներմուծողին դրանք ՀՀ տարածքից դուրս օգտագործելու նպատակով:*

11) ***Ստացման ենթակա գումար (ներ)*** *- Արտահանման պայմանագրից բխող Ներմուծողից ստացման ենթակա գումարներ:*

12) ***Սպասման ժամանակահատված*** *- Վարկառուի կողմից Ապահովադրին կատարվելիք վճարումը Ապահովադրի կողմից ստանալու Վկայագրով նախատեսված լրացուցիչ ժամանակահատված, որը հաշվարկվում է Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետից և սահմանվում է 90 /իննսուն/ օրացուցային օր: Սպասման ժամանակահատվածը կարող է կրճատվել Ապահովագրողի միակողմանի որոշմամբ:*

13) ***Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետ*** *- Վարկային պայմանագրով սահմանված Նախաարտահանման վարկի մայր գումարի ամբողջական մարման օրը:*

14) ***Ապահովագրության առավելագույն սահմանաչափ*** *- Ապահովագրողի կողմից հաստատված մեկ պահի դրությամբ գործող ապահովագրման ենթակա Նախաարտահանման վարկի առավելագույն չափ:*

15) ***Վնաս*** *– Նախաարտահանման վարկի մայր գումարի չմարման արդյունքում Նախաարտահանման վարկի մայր գումարի մասով Ապահովադրի կրած վնասը, սակայն ոչ ավել, քան Ապահովագրական գումարի չափը:*

3. Պայմանները ապահովագրության պայմանագրի (Վկայագրի) անբաժանելի մասն են կազմում և Վկայագիրը կնքելու միջոցով կողմերը ձեռք են բերում Պայմաններով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:
4. Վկայագիրը նվազագույնը պետք է սահմանի Ապահովագրության ուժի մեջ մտնելու պահը, Ապահովագրության դադարելու պահը, Ապահովագրական սակագնի մեծությունը, չհատուցվող գումարի մեծությունը, ինչպես նաև Ապահովագրողի, Ապահովադրի և Վարկառուի նույնականացման տվյալները:
5. Եթե Վկայագրով նախատեսված են Պայմաններին հակասող դրույթներ, Վկայագրով սահմանված դրույթները գերակա ուժ ունեն Պայմաններով սահմանված դրույթների նկատմամբ:
6. Պայմանների Գլուխ 13-ով նախատեսված դրույթները ենթակա են ներառման Վարկային պայմանագրում, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով: Պայմանների Գլուխ 13-ով նախատեսված դրույթները կարող են փոփոխվել Ապահովադրի և Վարկառուի գրավոր և Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությամբ, առանձին համաձայնագիր կազմելու միջոցով:
7. Ապահովագրության սահմանաչափը հաստատվում է Վարկառուի դիմումի հիման վրա՝ հաշվի առնելով Վարկառուի արտահանման պատմությունը, Վարկառուի կողմից Արտահանման պայմանագրի կատարման իրատեսականությունը, Վարկառուի ֆինանսական վիճակն ու վարկային պատմությունը և Ներմուծողի վճարունակությունը, այլ տեղեկություններ՝ ըստ տեղեկատվության հասանելիության և անհրաժեշտության:
8. Ապահովագրության սահմանաչափ ստանալու համար Վարկառուն պարտավոր է Ապահովագրողին տրամադրել Ապահովագրողի կողմից պահանջած փաստաթղթերը և անհրաժեշտ տեղեկատվությունը: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին, ըստ պահանջի, ներկայացնել գործարքին վերաբերող իր տրամադրության տակ եղած բոլոր փաստաթղթերը և տեղեկատվությունը՝ ինքնուրույն նախաձեռնելով բանկային գաղտնիքի բացահայտման թույլտվությանն ուղղված քայլերը:

9. Նախաարտահանման վարկը Ապահովադրի կողմից տրամադրվում է Վարկառուին անկանխիկ եղանակով վճարման միջոցով, եթե այլ բան սահմանված չէ Վկայագրով:
10. Ապահովադիրը պարտավոր է Վկայագրով սահմանված ժամկետում և չափով վճարել ապահովագրական սակագնի հիման վրա հաշվարկված ապահովագրավճարը: Ապահովագրական սակագնի մեծությունը որոշվում է Ապահովագրողի ներքին ընթացակարգերին համապատասխան՝ հիմք ընդունելով ապահովագրական ռիսկի մեծությունը:
11. Ապահովագրական վճարը ենթակա է վճարման Ապահովագրողի կողմից դուրսգրված համապատասխան հաշիվապրանքագրի հիման վրա:
12. Ապրանքի փաստացի արտահանումից (ծառայության մատուցումից) հետո Վարկառուն Արտահանման պայմանագրով սահմանված Ներմուծողի չվճարելու ռիսկը ծածկելու նպատակով Վկայագրով սահմանված ժամկետում, կարգով և պայմաններով Ապահովագրողի հետ կնքում է Արտահանման ապահովագրության վկայագիր, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով:
13. Ներմուծողի նկատմամբ Արտահանման պայմանագրով նախատեսված վճարումը ստանալու պահանջի իրավունքը որպես այլ պարտավորության կատարման ապահովման միջոց կարող է ծառայել միայն Ապահովագրողի և Ապահովադրի նախնական գրավոր համաձայնության դեպքում: Այդուհանդերձ, նաև այլ պարտավորության կատարման ապահովման միջոց հանդիսանալու դեպքում Վարկառուի պահանջի իրավունքի արժեքից այլ պարտատիրոջ (այդ թվում՝ Ապահովադրի) պահանջները բավարարվում են Ապահովագրողի պահանջները բավարարելուց հետո, այլապես Վարկառուն պահանջի իրավունքի չափով տուգանք է վճարում Ապահովագրողին:
14. Ապահովագրողի կողմից Նախաարտահանման վարկի ապահովագրության շրջանակներում կնքված Ներմուծողի չվճարման ռիսկից ապահովագրության վկայագրով Վարկառուին վճարված ապահովագրական հատուցման գումարը ոչ ավել քան Նախաարտահանման վարկի մայր գումարի չափով ուղղվում է Նախաարտահանման վարկի մարմանը (այդ թվում՝ վաղաժամկետ մարմանը): Վարկառուի Ներմուծողի կողմից Արտահանման պայմանագրի հիման վրա կատարվող վճարումներն ուղղվում են Նախաարտահանման վարկի վաղաժամկետ մարմանը՝ Վկայագրով սահմանված չափով:
15. Ապահովագրողի և Ապահովադրի միջև ձևավորված ֆինանսական պարտավորությունները ենթակա են վճարման բացառապես ՀՀ դրամով:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

1. Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Վարկառուի կողմից վճարման ենթակա Նախաարտահանման վարկի մայր գումարը (այսուհետ՝ Ապահովագրական գումար): Այն դեպքում, երբ նախաարտահանման վարկը տրամադրվում է վերականգնվող վարկային գծի տեսքով, ապա Ապահովագրական գումար է համարվում վերականգնվող վարկային գծի սահմանաչափը՝ ապահովագրված մասով:
2. Ապահովագրությունը չի ծածկում Նախաարտահանման վարկի նկատմամբ հաշվարկված տոկոսների, սպասարկման վճարների, ֆինանսավորման համար նախատեսված միջնորդավճարների, ինչպես նաև տույժերի, տուգանքների և պատժիչ բնույթ ունեցող այլ գանձումների չվճարման հետևանքով Ապահովադրի կողմից կրած վնասները:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

1. Ապահովագրական պատահար է համարվում Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետին Վարկառուի կողմից Նախաարտահանման վարկի մասնակի կամ ամբողջական չվճարումը:

2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամկետ է համարվում Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը:
3. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է գրավոր ձևով տեղեկացնել Ապահովագրողին՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնելով ապահովագրական հատուցման վճարման հայտ:
4. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել նաև իրեն հայտնի ցանկացած իրադարձության (փաստի) մասին, որը կարող է ապագայում հանգեցնել ապահովագրական պատահարի առաջացմանը՝ այդ իրադարձության (փաստի) մասին տեղեկանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Սույն գլխի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված տեղեկացումները ներկայացնելու պահանջների գծով սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ Ապահովադիրը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր սահմանված ժամկետում և կարգով տեղեկացման պարտականության կատարումը: Ապահովադիրը կրում է տեղեկացնելու անհնարինության ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է Պայմաններով նախատեսված տեղեկությունները Պայմաններով սահմանված կարգով անմիջապես հայտնել Ապահովագրողին:

ԳԼՈՒԽ 4. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

1. Վկայագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե Վկայագրով այլ ժամկետ չի նախատեսվում:
2. Վկայագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում.
   1) Ապահովադրի պահանջով, եթե Ապահովադիրը այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցել է Ապահովագրողին,
   2) Վկայագրի կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Վկայագրի (Պայմանների) էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում,
   3) Վկայագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ,
   4) ՀՀ օրենսդրությամբ կամ Վկայագրով սահմանված այլ դեպքերում:
3. Ի լրումն ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և/կամ Վկայագրով ամրագրված դեպքերի, ապահովագրությունը դադարում է նաև հետևյալ դեպքերում.
   1) Ապահովագրողը ապահովագրական հատուցման վճարման (մասնակի կամ ամբողջական) կամ մերժման որոշում է կայացրել,
   2) Նախաարտահանման վարկի մայր գումարն ամբողջությամբ մարվել է:
4. Ապահովադրի նախաձեռնությամբ Վկայագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Վկայագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարների վերադարձ չի իրականացվում:
5. Վարկային պայմանագրով Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետի երկարաձգման դեպքում, Ապահովագրողի համաձայնությամբ Վկայագրում կարող են կատարվել փոփոխություններ: Այդ դեպքում Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պարտավոր է վճարել ավելացած ռիսկին համաչափ հավելյալ ապահովագրավճար՝ ելնելով վճարելու պահին գործող ապահովագրական սակագնից: Ընդ որում Նախաարտահանման վարկի ժամկետի երկարաձգման դեպքում դրա գործողության ժամկետը կարող է գերազանցել 365 օրը:

ԳԼՈՒԽ 5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

1. Վկայագրով կիրառվում է ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում վճարելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:
2. Չհատուցվող գումարը սահմանվում է Վկայագրով՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ: Ընդ որում, չհատուցվող գումարը կազմում է 10%, եթե Վկայագրով այլ բան սահմանված չէ:
3. Չհատուցվող գումարից բխող ռիսկը ծածկող այլ ապահովագրության պայմանագրի կնքում չի կարող իրականացվել:

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

1. Ապահովադիրը/Վարկառուն պարտավոր է Վկայագրով սահմանված ժամկետում վճարել համաձայնեցված ապահովագրավճարը:
2. Եթե Ապահովադիրը/Վարկառուն Վկայագրով սահմանված ժամկետում չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի առանց վճարման լրացուցիչ ժամկետ սահմանելու միակողմանի լուծելու Վկայագիրը՝ առանց Ապահովադրին այդ մասին ծանուցելու: Ընդ որում, Ապահովագրողը կարող է սահմանել նաև տուգանք Վկայագրով սահմանված չափով, որը ենթակա է վճարման Վկայագիրը՝ միակողմանի լուծելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 7. ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Վարկային պայմանագրից բխող Վարկառուի պարտավորությունների կատարման ապահովման միջոցներ կարող են լինել.
   1) Վարկառուի գործադիր մարմնի ղեկավարի և նշանակալից մասնակցություն ունեցող (10 և ավելի տոկոս մասնակցություն) բաժնետերերի (մասնակիցների) (վերջիններիս հետ փոխկապակցված անձանց) (իրավաբանական և ֆիզիկական) երաշխավորությունները,
   2) Վարկառուի կամ վերջինիս հետ փոխկապակցված իրավաբանական անձի բաժնետոմսերը (բաժնեմասեր),
   3) Այլ ապահովման միջոցներ:
2. Կոնկրետ գործարքի մասով ապահովման միջոցների պարտադիր նվազագույն ցանկը որոշվում է Ապահովագրողի կողմից և սահմանվում Վկայագրով:

ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

1. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները (այսուհետ՝ փաստաթղթեր).
   1) Ապահովագրողի սահմանած ձևով լրացված ապահովագրական հատուցման վճարման հայտ,
   2) Ապահովագրական հատուցման վճարման հայտը Պայմաններով սահմանված ժամկետում և կարգով չներկայացնելու դեպքում՝ սահմանված ժամկետում դիմելու անհնարինության հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր և/կամ այլ բավարար ապացույցներ,
   3) Նախաարտահանման վարկի տրամադրումը, Վարկային պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոցների նկատմամբ իրավունքների գրանցումը (ՀՀ օրենսդրությամբ կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում), Վարկառուի կողմից ապրանքներն արտահանված լինելու

փաստը հավաստող փաստաթղթեր, Նախաարտահանման վարկի նպատակային օգտագործումն ստուգելու ընթացքում կազմված համապատասխան փաստաթղթեր, ինչպես նաև Ապահովագրողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր,

4) Վարկառուից Նախաարտահանման վարկի մասնակի վճարումներ ստացած լինելու պարագայում համապատասխան վճարումները հավաստող փաստաթղթեր,
5) սնանկության մասին հայտարարության հիման վրա սնանկության գործով պարտատերերի պահանջների նախնական ցուցակում ընդգրկված լինելը հավաստող փաստաթուղթ, իսկ ընդգրկված չլինելու դեպքում՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին ուղարկված ծանուցման պատճենը, եթե պատահարը տեղի է ունեցել Վարկառուի սնանկության արդյունքում,
6) Ապահովադրի և Վարկառուի միջև՝ Վարկային պայմանագրից բխող կամ Նախաարտահանման վարկի վերաբերյալ դատական, արբիտրաժային մարմնի վարույթում գտնվող վեճերին վերաբերող փաստաթղթեր և տեղեկություններ, եթե Ապահովադրի և Վարկառուի միջև առկա են նման վեճեր,
7) Վարկառուի և Ներմուծողի միջև՝ Արտահանման պայմանագրից բխող կամ դրա հետ կապված դատական, արբիտրաժային կամ վեճերի լուծման հետ կապված որոշում կայացնող նման իրավասություն ունեցող այլ սուբյեկտի վարույթում գտնվող վեճերին վերաբերող փաստաթղթեր և տեղեկություններ /առկայության դեպքում/, եթե Վարկառուի և Ներմուծողի միջև առկա են նման վեճեր, որոնց վերաբերյալ տեղեկությունը հայտնի է Ապահովադրին,
8) այլ փաստաթղթեր և ապացույցներ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար:

2. Ապահովագրողը Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցման հայտը կից փաստաթղթերով ստանալուց հետո անհրաժեշտության դեպքում Ապահովադրին գրավոր տրամադրում է Ապահովադրի կողմից դեռևս չներկայացված, սակայն ապահովագրական հատուցման կարգավորման համար ներկայացման ենթակա փաստաթղթեր: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները Ապահովադիրը Ապահովագրողին ներկայացնում է Ապահովագրողի կողմից սահմանված ժամկետում, որը չի կարող ավելի երկար լինել, քան Սպասման ժամանակահատվածը: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով ողջամիտ ժամկետում կամ սեփական նախաձեռնությամբ Ապահովագրողին տրամադրել այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար:
3. Ապահովագրական հատուցման հայտը ստանալուց հետո Ապահովագրողը պարտավոր է նախաձեռնել անհրաժեշտ ուսումնասիրություններ՝ ապահովագրական հատուցման հայտն առանց անհարկի ուշացումների կարգավորելու համար: Եթե Վկայագրի կողմերն այլ բան չեն պայմանավորվել, Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցման հայտի կարգավորում՝ Սպասման ժամանակահատվածի վերջին օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, որի ավարտին կայացվում է ապահովագրական հատուցման հայտը ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու կամ չբավարարելու մասին որոշում: Ընդ որում, Ապահովագրողը կարող է իր նախաձեռնությամբ միակողմանի կրճատել Սպասման ժամանակահատվածը՝ սահմանելով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման նոր ժամկետներ, սակայն, այնուհանդերձ, կրճատման արդյունքում Սպասման ժամանակահատվածը չի կարող 30 օրից պակաս սահմանվել:
4. Ապահովագրողն իրավունք ունի ստուգել Ապահովադրի կողմից տրամադրված փաստաթղթերի ճշտությունը ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար:
5. Ապահովադրի և Վարկառուի միջև Վարկային պայմանագրի վերաբերյալ Նախաարտահանման վարկի վերադարձման հետ կապված վեճերի պարագայում Ապահովագրողն իրավունք ունի կասեցնել սպասման ժամանակահատվածը: Եթե Սպասման ժամանակահատվածը չի կասեցվում

և Ապահովագրողը հօգուտ Ապահովադրի վճարում է ապահովագրական հատուցում, ապա վեճը հօգուտ Ապահովադրի լուծվելու դեպքում, Ապահովագրողը Վարկառուի նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք, հակառակ դեպքում՝ Ապահովագրական հատուցումը Ապահովադրի կողմից ենթակա է վերադարձման Ապահովագրողին վեճի լուծման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ապահովագրական հատուցման հայտի կարգավորման նպատակով Ապահովագրողի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն արտացոլվում են ապահովագրական հատուցումն ամբողջությամբ կամ մասնակի վճարելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու վերաբերյալ Ապահովագրողի որոշման մեջ (այսուհետ՝ ապահովագրական հատուցման որոշում):
7. Ապահովագրական հատուցումն ստանալուց հետո Ապահովադիրը կրում է Վարկառուից Նախաարտահանման վարկը վերադարձնելու (հավաքագրելու) պարտականությունը՝ գործելով իր անունից Նախաարտահանման վարկի չապահովագրված և չհատուցվող գումարի մասով և Ապահովագրողի անունից և նրա լիազորությամբ՝ ապահովագրական հատուցման չափով, եթե Ապահովագրողն արդեն իսկ չի իրացրել իր հետադարձ պահանջի իրավունքը:
8. Վարկառուից Նախաարտահանման վարկը վերադարձնելու (հավաքագրելու) արդյունքում Ապահովադիրը վերադարձված Նախաարտահանման վարկն Ապահովագրական հատուցման չափով վերադարձնում է Ապահովագրողին: Ընդ որում, Վարկառուից Նախաարտահանման վարկը մասնակի վերադարձնելու (հավաքագրելու) դեպքում վերադարձված Նախաարտահանման վարկն Ապահովագրողին վերադարձվում է դրանից նվազեցնելով չհատուցվող գումարի համամասնությամբ հաշվարկված գումարը:
9. Ապահովագրողի կողմից Ապահովադրին հատուցման ենթակա գումարը որոշվում է ապահովագրական գումարից նվազեցնելով հետևյալ գումարները.
   1) մինչև ապահովագրական հատուցման որոշում կայացնելու օրը Նախաարտահանման վարկի գծով վճարված գումարներ,
   2) Ապահովադրի կողմից Վարկառուին վճարման ենթակա գումարներ, որոնք որպես հակընդդեմ պարտավորություններ ենթակա են հաշվանցման, եթե այլ բան սահմանված չէ Վկայագրով,
   3) Վկայագրով նախատեսված չհատուցվող գումար:
10. Եթե Ապահովադիրը Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությամբ երկարաձգել է Վարկառուի կողմից Նախաարտահանման վարկի մարման վերջնաժամկետը, ապա Ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրը և ապահովագրական հատուցման վճարման չափը որոշելիս Ապահովագրողը հիմք է ընդունում սահմանված նոր ժամկետը: Եթե Վարկային պայմանագրի համաձայն Ապահովադիրը Նախաարտահանման վարկի կամ դրա մի մասի վճարումը առանց Ապահովագրողի համաձայնության դարձնում է վաղաժամկետ վճարման ենթակա, ապա այդ փոփոխությունները հաշվի չեն առնվում Ապահովագրողի պարտավորությունները, ապահովագրական պատահարի օրը և ապահովագրական հատուցման վճարման չափը և ժամկետը որոշելիս:
11. Ապահովագրական հատուցումը վճարվում է ՀՀ դրամով: Հաշվարկների ժամանակ օգտագործվում է ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելու օրվա դրությամբ արժութային շուկայում ձևավորված և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված համապատասխան միջին փոխարժեքը, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
12. Ապահովագրական հատուցման վճարման ժամկետը չի կարող կրճատվել Վարկառուի սնանկության կամ Պայմաններով նախատեսված Նախաարտահանման վարկի վաղաժամկետ մարման հիմքեր ի հայտ գալու հիմքով, եթե այլ բան սահմանված չէ Ապահովագրողի և Ապահովադրի գրավոր համաձայնությամբ:

13. Ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման որոշում կայացնելու օրվանից 15 օրացուցային օր ժամկետում Ապահովադրի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
14. Ապահովադիրը Ներմուծողի կողմից Արտահանման պայմանագրով նախատեսված վճարման հաշվին կամ Վարկառուի կողմից Նախաարտահանման վարկի վճարման վերջնաժամկետին, ինչպես նաև դրանից հետո կատարված վճարումների հաշվին մուտքագրված գումարներից առաջնային կարգով մարում է Նախաարտահանման վարկի մայր գումարը:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԿԱՄ ԴՐԱ ՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

1. Ապահովագրողն ապահովագրական հատուցման վճարման պարտավորություն չի կրում հետևյալ դեպքերում (հատուցման բացառություններ)՝
   1) եթե հատուցման պահանջը վերաբերում է Նախաարտահանման վարկի տոկոսներին, օրենսդրությամբ սահմանված կամ Վարկային պայմանագրով նախատեսված տույժերին, տուգանքներին կամ նմանատիպ բնույթ ունեցող այլ վճարներին,
   2) եթե Վարկային պայմանագրից բխող իրավունքները առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության փոխանցվել են երրորդ անձի,
   3) եթե առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության և Վկայագրի գործողության ժամկետում, Ապահովադիրն ու Վարկառուն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով դարձել են փոխկապակցված,
   4) եթե Վարկառուի և Ապահովադրի միջև առկա է վեճ Վարկային պայմանագրի դրույթների կամ ստացման ենթակա ապահովագրված գումարների չափի վերաբերյալ, և քանի դեռ առկա չէ հօգուտ Ապահովադրի կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: Ապահովագրողը կարող է Պայմաններով սահմանված կարգով որոշում կայացնել Ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ, եթե վեճը Ապահովագրողի կողմից դիտարկվում է որպես ոչ հիմնավոր,
   5) եթե ապահովագրական պատահարն ի հայտ է եկել Ապահովադրի՝ առանց ողջամիտ տնտեսական հիմնավորման կայացրած որոշման արդյունքում, որն ուղղակիորեն ազդել է Վարկառուի կողմից Արտահանման պայմանագրի կատարման ձախողման կամ հանգեցրել է Վարկառուի կողմից Վարկային պայմանագրի պայմանների չկատարման,
2. Ապահովագրողը իրավասու է մերժել ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ դեպքերում՝
   1) Ապահովադրի կողմից Վկայագրի կնքման կամ ապահովագրական հատուցման վճարման համար Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ, անարժանահավատ, էականորեն խեղաթյուրված տեղեկություններ, կամ այդ փաստաթղթերը կեղծ են կամ թերի, եթե Ապահովադիրը իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսների միջոցով կարող էր կանխել այդպիսի փաստաթղթերի ներկայացումը,
   2) Ապահովադրի կողմից Վկայագրի կնքման կամ ապահովագրական հատուցման վճարման համար թաքցրել է ապահովագրական ռիսկը գնահատելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ, (այդ թվում՝ չի բացահայտել տեղեկություններ Վկայագրի կնքման պահին Վարկառուի կողմից Ապահովադրի (Ապահովադրի բաժնետերերի, մասնակիցների) նկատմամբ գոյություն ունեցող ընթացիկ կամ ժամկետանց պարտավորությունների (ներառյալ նախկինում առկա և դուրս գրված պարտավորությունների) վերաբերյալ և այլն), կամ այլ էական տեղեկություններ ապահովագրական օբյեկտի, գործարքի, տեղի ունեցած պատահարի և վնասի վերաբերյալ,

3) Վարկային պայմանագրից բխող պարտավորությունների կատարման ապահովման միջոցների (երաշխավորության, գրավի և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման այլ միջոցների) կիրառումը (այդ պայմանագրերով իրավունքների իրականացումը) Ապահովադրի դիտավորության կամ անզգուշության հետևանքով Ապահովագրողի համար դարձել է անհնար,
4) Ապահովադիրը չի կատարում Նախաարտահանման վարկի ապահովման միջոցների (երաշխավորության, գրավի և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման այլ միջոցների) իրացման (կիրառման) հետ կապված Ապահովագրողի ողջամիտ պահանջները՝ մասնավորապես ՀՀ օրենսդրությամբ կամ Վարկային պայմանագրով կամ Ապահովադրի ու Վարկառուի միջև ձեռքբերված այլ գրավոր համաձայնությամբ սահմանված ժամկետում (այդպիսի ժամկետի բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում) չի օգտվում վեճը կարգավորող մարմիններին (այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դատական ատյաններին) հաջորդականորեն դիմելու (հայց ներկայացնելու) իր իրավունքից,
5) Ապահովադիրը հրաժարվել է Վարկառուի նկատմամբ ունեցած իր պահանջի իրավունքից և կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի մեղքով,
6) Ապահովադիրը հատուցում է ստացել երրորդ անձից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար, այն չափով, որքանով պատճառված վնասի համար ստացվել է հատուցում,
7) առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության Վարկային պայմանագրով և/կամ դրա կատարման ապահովման միջոցների վերաբերյալ կնքված պայմանագրերով սահմանված Ապահովադրի իրավունքները փոխանցվել են երրորդ անձի,
8) վնասները Ապահովադրի կողմից Վարկային պայմանագրի պայմանների չպահպանման կամ ոչ պատշաճ կատարման հետևանք են,
9) Ապահովադրի և Վարկառուի միջև առկա է եղել Վարկային պայմանագրի կիրառման կամ Նախաարտահանման վարկի վերաբերյալ վեճ, որը հանգեցրել է ապահովագրական պատահարի և վեճը լուծվել է հօգուտ Վարկառուի,
10) Վարկառուի սնանկության դեպքում Ապահովադրի մեղքով Նախաարտահանման վարկի մարման հետ կապված Ապահովադրի պահանջը բավարարվելու մասով Ապահովադիրը չի ընդգրկվել Վարկառուի պարտատերերի ցանկում,
11) Ապահովադրի կողմից խախտվել են Պայմանների նախատեսված ապահովագրական հատուցման վճարման հայտի ներկայացման ժամկետները և չի հիմնավորվել այդ խախտման հարգելի պատճառները,
12) Ապահովադիրը մերժում է Նախաարտահանման վարկի գծով Վարկառուի նկատմամբ Ապահովադրի պահանջի իրավունքը Ապահովագրողին փոխանցելու Ապահովագրողի պահանջը,
13) Ապահովադիրը մերժում է Ապահովագրողի պահանջը Ապահովագրողի հետ կնքելու այնպիսի պայմանագիր, որով Ապահովադիրը իրավական միջոցներով կօժանդակի Ապահովագրողին Նախաարտահանման վարկը Վարկառուի կողմից վճարելու պարտավորության կատարումն ապահովելու համար,
14) Վկայագրով և/կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

3. Ապահովագրողն իրավասու է համամասնորեն նվազեցնել ապահովագրական հատուցման վճարման չափը՝
1) եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Ապահովադրի կամ նրա անունից գործող անձի ուղղակի կամ անուղղակի գործողությունների արդյունքում, հատկապես այն դեպքերում, երբ Ապահովադրի կողմից խախտվել է Վարկային պայմանագիրը,

2) եթե Վարկային պայմանագրով կամ Ապահովադրի կողմից ձևակերպված կամ հաստատված նմանատիպ այլ փաստաթղթերով ամրագրվել են այնպիսի դրույթներ, որոնք սահմանափակում են Ապահովագրողի իրավունքները կամ նման սահմանափակումների կիրառման հնարավորություն են ստեղծում,
3) եթե Վարկային պայմանագրի ստորագրման ամսաթվից հետո Ապահովադիրը և Վարկառուն հետագա այնպիսի համաձայնություն են ձեռքբերում, որը խոչընդոտելու, հետաձգելու կամ սահմանափակելու է Նախաարտահանման վարկի մայր գումարի վճարումը,
4) եթե Ապահովադիրը խախտել է Պայմաններով, Վկայագրով, այլ իրավական ակտերով իր պարտավորությունները Ապահովագրողի նկատմամբ, և այդ խախտումը էական ազդեցություն է ունեցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու, դրա ընթացքի, դրա հետևանքների մեծացման կամ վնասի չափի մեծացման առումով,
5) Ապահովադիրը Պայմանների համաձայն փաստաթղթերի և տեղեկությունների մասին ծանուցումը ստանալուց հետո ծանուցմամբ նախատեսված ժամկետում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները և չի հիմնավորել, որ սահմանված ժամկետում փաստաթղթերի չներկայացումը պայմանավորված է եղել դրանց ներկայացման անհնարինությամբ (ներառյալ՝ դատական գործընթացներով) և փաստաթղթերը և տեղեկությունները չեն ներկայացվել անհնարինությունը պայմանավորող հանգամանքների վերացումից հետո՝ ծանուցմամբ նախատեսված ժամկետում,
6) Վկայագրով և/կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

ԳԼՈՒԽ 10. ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԶԻՋՄԱՆ (ՑԵՍԻԱ) ԻՐԱՎՈՒՆՔ

1. Ապահովադրին Ապահովագրական հատուցում վճարելուց հետո Վարկառուի նկատմամբ Ապահովադրի պահանջի իրավունքը (այդ թվում նաև Վարկային պայմանագրից բխող Վարկառուի պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները) հատուցմանը համամասնորեն համարվում է զիջված Ապահովագրողին, եթե Ապահովագրողն ու Ապահովադիրը այլ բան չեն պայմանավորվել:
2. Պահանջների զիջման հանգամանքից անկախ, Ապահովադիրը պարտավոր է քայլեր ձեռնարկել Ապահովագրողին օժանդակելու վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով գումար Վարկառուից հետ բերելու հարցում: Այս նպատակով, Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել Նախաարտահանման վարկին առնչվող բոլոր փաստաթղթերը և առանց հապաղման տրամադրել Ապահովագրողին անհրաժեշտ այլ աջակցություն:
3. Իրավական ընթացակարգերի կիրառման պարզությունից կամ այլ հանգամանքներից ելնելով՝ Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պարտավոր է ապահովել Նախաարտահանման վարկի հետ ստացման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը: Նման դեպքերում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին փոխհատուցել գումարի հետ բերմանը ուղղված նպատակային ծախսերը դրանց պատշաճ փաստաթղթավորված և հիմնավորված լինելու դեպքում:
4. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելուց հետո Վարկառուի կամ երրորդ անձի կողմից Նաախաարատահանման վարկի մայր գումարի մարմանն ուղղված վճարումները ապահովագրական հատուցմանը համամասնորեն պատկանում են Ապահովագրողին և, նման վճարումներ ստանալու դեպքում, Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին ու վճարումը ստանալու պահից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստացված գումարները ապահովագրական հատուցմանը համամասնորեն փոխանցել Ապահովագրողին:
5. Եթե իրավական ընթացակարգերի կիրառման պարզությունից կամ այլ հանգամանքներից ելնելով, Վարկային պայմանագրից բխող՝ Վարկառուի վճարման ստացման պահանջի

իրավունքը համապատասխան պայմանագրով չի զիջվել Ապահովագրողին, ապա Ապահովագրողը և Ապահովադիրը պետք է վճարումների հետբերման տեսանկյունից փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգող պայմանագիր կնքեն:

ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապահովադիրը իրավունք ունի՝
   1) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ստանալ ապահովագրական հատուցում,
   2) Ապահովագրողի համաձայնության առկայության դեպքում երրորդ կողմին փոխանցել ապահովագրված Նախաարտահանման վարկի մայր գումարի մասով վճարման ենթակա գումարների ստացման պահանջի իրավունքը,
   3) Ապահովագրական հատուցման վճարման որոշման հիման վրա որոշման կայացման պահից 15 օրացուցային օրվա ընթացքում ստանալ ապահովագրական հատուցում:
2. Ապահովադիրը պարտավոր է՝
   1) զերծ մնալ Վարկային պայմանագրում կամ նմանատիպ այլ փաստաթղթերում այնպիսի դրույթներ սահմանելուց, որոնք սահմանափակում են Ապահովագրողի իրավունքները կամ նմանատիպ սահմանափակման կիրառման հնարավորություն են տալիս,
   2) Վարկային պայմանագիրը ստորագրելուց հետո զերծ մնալ Վարկառուի հետ հետագա այլ պայմանագրի ստորագրումից, որը հետաձգելու, ուշացնելու կամ սահմանափակելու է ապահովագրված Նախաարտահանման վարկի մայր գումարի վճարումը,
   3) տրամադրել Ապահովագրողին արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն Վարկառուի ֆինանսական և իրավական վիճակի և Ապահովագրության տեսանկյունից այլ էական տեղեկատվության ի հայտ գալու դեպքում, նույնիսկ, եթե Ապահովագրողը չի դիմել նման տեղեկատվության ստանալու համար,
   4) առանց հապաղման տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել ապահովագրական պատահարի առաջացմանը կամ կարող են մեծացնել ապահովագրական վնասի մեծությունը կամ որևէ ձևով կարող են անդրադառնալ Ապահովագրողի Ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա,
   5) չհատուցվող գումարի չափով մասնակցել ապահովագրական ռիսկի համամասնորեն կրելուն և չհատուցվող գումարի մասով չդիմել հավելյալ այլ ապահովագրության,
   6) Վարկառուի կողմից Նախաարտահանման վարկի մայր գումարի մարումը սահմանված ժամկետից 5 օր ուշացնելու դեպքում անհապաղ համապատասխան գրավոր ծանուցում ուղարկել Վարկառուին և Պայմաններով սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողին տեղեկացնել Նախաարտահանման վարկի չվճարման վերաբերյալ,
   7) ինքնուրույն կամ Ապահովագրողի հետ համաձայնեցրած ձեռնարկել բոլոր ողջամիտ քայլերը, որոնք կարող են կանխարգելել ապահովագրական պատահարի ի հայտ գալը կամ կարող են նվազեցնել ապահովագրական պատահարի մեծությունը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Ապահովադրի ունեցած պահանջների ժամանակին և պատշաճ կիրարկմանը կամ ժամկետանց ապահովագրված գումարների հետբերմանը: Ապահովադիրը պատասխանատվություն է կրում Նախաարտահանման վարկի հետբերման նպատակով դատարանին կամ այլ համապատասխան մարմնին ուշ դիմելու հետևանքով հետբերման ենթակա գումարի նվազման կամ իրավական կիրարկման համապատասխան սահմանափակումների համար,
   8) համապատասխանեցնել Ապահովագրողի հետ Ապահովագրական պատահարի կանխարգելմանը կամ ապահովագրական վնասի նվազեցմանն ուղղված քայլերի

հաջորդականությունը, Վարկառուի կամ երրորդ անձի նկատմամբ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել միայն Ապահովագրողի համաձայնությամբ՝ այն դեպքերում, երբ Ապահովագրողը համապատասխան դիմում ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին չի տեղեկացնում ներկայացված միջոցառումների վերաբերյալ իր դիրքորոշման մասին կամ Ապահովադրի հետ չի համաձայնեցնում դիրքորոշման հստակեցման վերջնական ժամկետ, ապա այդ դեպքերում Ապահովադիրը կարող է համարել, որ ներկայացված միջոցառումների ծրագիրը ընդունելի է Ապահովագրողի համար,

9) ապահովագրական հատուցման վճարմանը զուգընթաց Ապահովագրողի առաջարկությամբ Ապահովագրողի հետ կնքել վճարման ենթակա գումարների պահանջի զիջման վերաբերյալ պայմանագիր կամ կողմերի իրավունքները և պարտականությունները հստակեցնող պայմանագիր,

10) վերադարձնել Ապահովագրողին արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրը խոչընդոտում է Ապահովագրողին փոխանցված իրավունքների լիարժեք կիրառմանը, կամ եթե Ապահովադիրը հրաժարվում է Ապահովագրողին զիջել Վարկառուի նկատմամբ պահանջի իրավունքը, կամ, եթե Ապահովադիրը համապատասխան պայմաններ չի ստեղծել, որպեսզի Ապահովագրողը կարողանա պատշաճ ձևով կիրարկել իրեն զիջված (փոխանցված) իրավունքները,

11) վերադարձնել Ապահովագրողին արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումը, եթե պարզ է դարձել, որ ապահովագրական հատուցումը վճարվել է կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկատվության հիման վրա կամ եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքը չեղարկվել է կամ եթե առկա է Պայմանների գլուխ 9-ով նախատեսված դեպքերից որևէ մեկը, եթե դրանք Ապահովագրողից անկախ պատճառներով Ապահովագրողին հայտնի են դարձել կամ տեղի են ունեցել ապահովագրական հատուցում վճարելուց հետո:

12) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետում Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ նախաձեռնել սնանկության գործընթաց, եթե դրա հիմքերն առկա են:

ԳԼՈՒԽ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապահովագրողն իրավունք ունի՝

1) գանձել ապահովագրական վճար ապահովագրության գործողության ողջ ժամանակահատվածի համար,

2) պահանջել Վարկառուից արտահանման պայմանագիրը, դրա անբաժանելի մասը կազմող համաձայնագրերը, հավելվածները և գործարքին վերաբերող այլ փաստաթղթեր, սակայն դրանով Ապահովագրողը պատասխանատվություն չի ստանձնում ներկայացված փաստաթղթերի բովանդակության մասով,

3) պահանջել Ապահովադրից Վարկային պայմանագիրը և դրա անբաժանելի մասը կազմող համաձայնագրերը, հավելվածները և այլ փաստաթղթեր, սակայն դրանով Ապահովագրողը պատասխանատվություն չի ստանձնում ներկայացված փաստաթղթերի բովանդակության մասով,

4) պարզել Վարկառուի և Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկատվության ու փաստաթղթերի հավաստիությունը և ամբողջականությունը՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն պահպանելով ներկայացված տեղեկատվության գաղտնիությունը,

5) պահանջել Ապահովադրից պատշաճ ձևով ապահովել Վարկառուի կամ երրորդ անձանց նկատմամբ առկա պահանջի իրականացումը,

6) բանակցել Վարկառուի հետ և ստանալ տեղեկատվություն վճարված ապահովագրական հատուցման գումարի հետբերման կամ հավաքագրման վերաբերյալ,

7) պահանջել Ապահովադրից վերադարձնել ապահովագրական հատուցման գումարը, եթե պարզ է դարձել, որ ապահովագրական հատուցումը վճարվել է կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկատվության հիման վրա կամ եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքը չեղարկվել է կամ եթե առկա է Պայմանների գլուխ 9-ով նախատեսված դեպքերից որևէ մեկը, այն դեպքում, երբ դրանք Ապահովագրողից անկախ պատճառներով Ապահովագրողին հայտնի են դարձել կամ տեղի են ունեցել ապահովագրական հատուցում վճարելուց հետո:

2. Ապահովագրողը պարտավոր է՝
   1) վճարել ապահովագրական հատուցումը ապահովագրական հատուցման վճարման որոշման կայացման պահից 15 օրացուցային օրվա ընթացքում,
   2) պատշաճորեն պահպանել ներկայացված փաստաթղթերը
   3) Ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին տրամադրել Ապահովագրական հատուցման որոշումը:

ԳԼՈՒԽ 13. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ի լրումն Ապահովադրի և Վարկառուի միջև կնքվող Վարկային պայմանագրի դրույթների վերջինիս մեջ ներառվում են նաև հետևալ դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով.
   1) Վարկային պայմանագրի այլ դրույթների և սույն դրույթների միջև հակասությունների դեպքում սույն դրույթները գերակայում են:
   2) Վարկը կարող է ուղղվել միայն Արտահանման պայմանագրի կատարման նպատակով Վարկառուի կողմից շրջանառու միջոցների ձեռքբերմանը (այդ թվում՝ հումքի, նյութերի ձեռքբերում) և/կամ որոշակի ծախսերի կատարմանը (փաթեթավորման, արտադրանքը շուկայական տեսքի բերելու, տրանսպորտային, մաքսային և նմանատիպ այլ ծախսերի կատարում):
   3) Վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրվող Նախաարտահանման վարկի գումարը տրամադրվում է Ապահովադրի հետ համաձայնեցված մատակարարների ցանկում նշված մատակարարներին փոխանցելու եղանակով, այդ թվում նաև Ապահովադրի հետ համաձայնեցված մատակարարների ցանկում նշված մատակարարների օգտին Վարկառուի հանձնարարությամբ Ապահովադրի կողմից թողարկված փաստաթղթային ակրեդիտիվով վճարում կատարելու միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով:
   4) Վարկառուն պարտավոր է ապրանքի փաստացի արտահանումից (ծառայության մատուցումից) հետո Վկայագրով սահմանված ժամկետում, կարգով և պայմաններով Արտահանման պայմանագրով սահմանված Ներմուծողի չվճարելու ռիսկը ծածկելու նպատակով Ապահովագրողի հետ կնքել Արտահանման ապահովագրության վկայագիր, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով:
   5) Ապահովադրին Ապահովագրական հատուցում վճարելուց հետո Վարկառուի նկատմամբ Ապահովադրի պահանջի իրավունքը հատուցմանը համամասնորեն համարվում է զիջված Ապահովագրողին:
   6) Ապահովագրողի և Վարկառուի միջև հակընդդեմ պարտավորությունները ենթակա են հաշվանցման:
   7) Ապահովագրողի կողմից Նախաարտահանման վարկի ապահովագրության շրջանակներում կնքված Ներմուծողի չվճարման ռիսկից ապահովագրության վկայագրով Վարկառուին վճարված ապահովագրական հատուցման գումարը ոչ ավել քան Նախաարտահանման վարկի մայր գումարի չափով ուղղվում է Նախաարտահանման վարկի մարմանը (այդ թվում՝ վաղաժամկետ մարմանը): Վարկառուի Ներմուծողի կողմից Արտահանման պայմանագրի

հիման վրա կատարվող վճարումներն ուղղվում են Նախաարտահանման վարկի վաղաժամկետ մարմանը՝ Վկայագրով սահմանված չափով:

8) Առանց Ապահովագրողի գիտության Ներմուծողի նկատմամբ Արտահանման պայմանագրով նախատեսված վճարումը ստանալու պահանջի իրավունքը որպես այլ պարտավորության կատարման ապահովման միջոց կիրառելու դեպքում, Վարկառուն Ապահովագրողի պահանջով Ապահովագրողին վճարում է տուգանք Նախաարտահանման վարկի մինչև 30 տոկոսի չափով:

9) Ներմուծողի նկատմամբ Արտահանման պայմանագրով նախատեսված վճարումը ստանալու պահանջի իրավունքը որպես այլ պարտավորության կատարման ապահովման միջոց կարող է ծառայել միայն Ապահովագրողի և Ապահովադրի նախնական գրավոր համաձայնության դեպքում: Այդուհանդերձ, նաև այլ պարտավորության կատարման ապահովման միջոց հանդիսանալու դեպքում Վարկառուի պահանջի իրավունքի արժեքից այլ պարտատիրոջ (այդ թվում՝ Ապահովադրի) պահանջները բավարարվում են Ապահովագրողի պահանջները բավարարելուց հետո, այլապես Վարկառուն պահանջի իրավունքի չափով տուգանք է վճարում Ապահովագրողին:

10) Եթե Վարկառուի և Ներմուծողի միջև առկա և/կամ հնարավոր հաշվանցի վերաբերյալ Վարկառուի կողմից թաքցված տեղեկատվությունը բացահայտվել է Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո, ապա Ապահովագրողը Վարկառուի նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք: Ընդ որում, Վարկառուն պարտավոր է տրամադրել հավաստիացում, որ սույն պայմանների ստորագրման պահին Ներմուծողի և Վարկառուի միջև առկա չեն հաշվանցման ենթակա պարտավորություններ և պարտավորվում է այդպիսի պարտավորություններ առաջանալու դեպքում անմիջապես, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով հայտնել Ապահովադրին: Եթե Հաշվանցի վերաբերյալ Վարկառուի կողմից թաքցված տեղեկատվությունը բացահայտվել է Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո, ապա Ապահովագրողը Վարկառուի նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք:

11) Վարկի վաղաժամկետ մարման դեպքում Ապահովադրին իրավունք չունի Վարկառուից գանձել վաղաժամկետ մարման հետ կապված որևէ տուգանք կամ այլ վճար:

12) Վարկառուն պարտավոր է տեղեկացնել Ապահովադրին Արտահանման պայմանագրով ծագած ցանկացած վեճի կամ տարաձայնության վերաբերյալ դրա մասին հայտնի դառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Ապահովադրի պահանջով տրամադրել արտահանման գործարքի (այդ թվում՝ Վարկի հետ կապված) ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն այդպիսի պահանջ ներկայացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

13) Վարկառուն պատասխանատվություն է կրում Ապահովադրին ներկայացված ցանկացած կեղծ տեղեկատվության համար՝ ստացված Նախաարտահանման վարկի ամբողջ գումարի չափով:

14) Արտահանման պայմանագրով նախատեսված էական պայմաններին վերաբերող ցանկացած փոփոխություն ենթակա է գրավոր կարգով համաձայնեցման Ապահովադրի և Ապահովագրողի հետ:

15) Վարկառուն Ապահովադրին պետք է տրամադրի իր համաձայնությունը, որպեսզի Ապահովադիրը Ապահովագրողին (նրա իրավահաջորդին) տրամադրի Վարկառուի վերաբերյալ օրենքով պաշտպանվող գաղտնիք (այդ թվում՝ բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք) կազմող տեղեկատվություն:

16) Վարկառուն Ապահովադրին պետք է տրամադրի իր համաձայնությունը Ապահովագրողի պահանջով Ապահովագրողի ներկայացուցչի մասնակցությամբ իրականացնել Նախաարտահանման վարկի օգտագործման նպատակայնության ստուգում:

17) Նախաարտահանման վարկի ոչ նպատակային օգտագործման համար Վարկառուի նկատմամբ կարող է կիրառվել տուգանք Նախաարտահանման վարկի գումարի ոչ նպատակային օգտագործված մասի նվազագույնը 5 տոկոսի չափով, որը ենթակա է վճարման Ապահովագրողին: Նախաարտահանման վարկի գումարի նվազագույնը 5 տոկոսի չափով տուգանք կարող է կիրառվել նաև այն դեպքում, երբ Վարկառուն խոչընդոտում է Ապահովադրի և/կամ Ապահովագրողի կողմից իրականացվող Նախաարտահանման վարկի նպատակայնության ստուգմանը:
18) Ապահովադիրը չի կարող առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության համաձայնել Վարկառուի հետ փոփոխել Վարկային պայմանագրի պայմանները, այդ թվում՝ վճարումների ժամկետները, գումարները կամ տոկոսները, Նախաարտահանման վարկի և դրա կատարումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրերով սահմանված հարաբերությունների նկատմամբ իրավունքները գրավադրել կամ դրանց օգտագործումը այլ կերպ սահմանափակել կամ փոխանցել երրորդ անձի:

2. Գործարքի առանձնահատկություններից ելնելով Ապահովագրողի կողմից կարող են սահմանվել Պայմանների էությունից բխող այլ դրույթներ:

ԳԼՈՒԽ 14. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործարքի առանձնահատկություններից ելնելով Ապահովագրողի տնօրինության որոշմամբ Պայմաններից կարող են կատարվել բացառություններ:
2. Պայմաններով և Վկայագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
3. Եթե ՀՀ օրենդրության փոփոխության արդյունքում Պայմանների կամ Վկայագրի որոշ դրույթներ դառնում են անվավեր, անարդյունավետ կամ ոչ կիրառելի, այդ հանգամանքը չի տարածվում Պայմանների այլ դրույթների վրա:
4. Վկայագրի կնքման համար կամ դրա դրույթների կատարման համար Կողմերի միջև փոխանակված տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման: Կողմը, որը ստացել է նման տեղեկատվություն, իրավունք չունի առանց մյուս կողմի համաձայնության երրորդ կողմի փոխանցել այդ տեղեկատվությունը, և չի կարող այդ տեղեկատվությունը օգտագործել այլ ոչ հիմնավորված նպատակով:
5. Եթե Վկայագրով կողմերի միջև այլ պայմանավորվածություն չի ամրագրվում, Վկայագրից կամ դրա հետ կապված այլ իրավահարաբերությունից բխող հավանական վեճերը, որոնք փոխադարձ համաձայնությամբ չեն կարգավորվում, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:
6. Պայմաններով սամանված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
7. Սույն պայմաններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի մայիսի 1-ին և կիրառվում են այդ ամսաթվից հետո Ապահովագրողի իրավասու մարմնի կողմից ընդունված Ապահովագրության սահմանաչափի վերաբերյալ որոշումների հիման վրա կնքված գործարքների նկատմամբ:
8. «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 6(23) որոշմամբ հաստատված «Նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության պայմանները» կիրառվում են միայն այդ պայմանների շրջանակներում տրամադրված ապահովագրության առաջարկներկի նկատմամբ: